ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԻՆԵ ՏԱՐՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը 00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Անահիտ Սերգեյի Մելքումյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Սերյոժայի Ավետիսյան

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
Անահիտ Համբարձումի Համբարձումյան

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2022թ. դեկտեմբերի 16-ին, ժամը 15^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. նոյեմբերի 3-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տ.գ.թ., դոցենտ՝ Ա.Հ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u>

Տնտեսությունը մի ամբողջական համակարգ է, որի յուրաքանչյուր բաղադրիչ կատարում է որոշակի գործառույթ: Համակարգի բաղկացուցիչներից որևէ մեկում տեղ գտած խնդիրները արձագանք են գտնում ողջ համակարգի վրա: Ատենախոսության քննարկման առարկա են դարձել ՀՀ աշխատանքի շուկայում զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները: Զբաղվածությունը ինքնին բարդ և բազմակողմանի երևույթ է, որի վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Զբաղվածության խթանման հարցում կարևոր է այն պայմանավորող գործոնների բացահայտումն ու համադրումը, ողջամիտ տնտեսական քաղաքականության իրականացումը:

Հատկապես 2020 թվականը շրջադարձային էր նաև ՀՀ աշխատանքի շուկայի համար՝ հաշվի առնելով Քովիդ-19 համավարակի, իսկ այնուհետև նաև 44-օրյա պատերազմի հետևանքների տեսանկյունից: Աշխատանքի շուկայի կարգավորման առանձնահատկություններից մեկն այն է, որ դրա կենտրոնում մարդն է, ով առաջարկում է իր աշխատանքը: Մյուս կողմից, մեծ խնդիրներ են առաջանում նաև աշխատուժի պահանջարկի տեսանկյունից: Այս գործընթացները կարող են տևել տարիներ: Իրավիճակին կարճաժամկետ հանգուցալուծումներ տալով կարելի է գնալ առաջ, սակայն ճիշտ քաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել զբաղվածության մակարդակը՝ տարաբնույթ չափանիշներով: Զբաղվածության մակարդակի հետազոտումը իրականացվել է նախ և առաջ աշխատանքի շուկայի և դրանում գործող առանցքային ցուցանիշների ուսումնասիրությամբ: Նկատենք, որ զբաղվածության կարգավորման արդիականացումը նպաստում է աշխատանքի շուկայում առկա ավանդական մոտեցումների վերանայմանը և նոր միջավայր է ստեղծում, որը տնտեսության բոլոր ոլորտներում պահանջում է զբաղվածության նոր քաղաքականության մշակում: Վերջինիս ընտրության հարցում մեծ նշանակություն ունի միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը կատարվել է աշխատանքի շուկային վերաբերող տարբեր մոդելների վերլուծության միջոցով:

Այնուհանդերձ, զբաղվածության կարգավորման այնպիսի հարցեր, ինչպիսիք են համադրելի վիճակագրական տեղեկատվության գործոնային վերլուծությունը, շահառուների տեսանկյունից կարգավորիչ գործիքակազմի կիրառման արդյունավետության գնահատումները դեռևս իրենց լիարժեք լուծումները չեն ստացել արտասահմանյան և հայրենական հետազոտողների աշխատություններում: Նշված հանգամանքը կանխորոշել է ինչպես ատենախոսության առջև դրված խնդիրները, այնպես էլ դրանց լուծումների գծով եզրակացությունների և առաջարկությունների շրջանակն ու ներկայացումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է ՀՀ զբաղվածության մակարդակի համալիր վերլուծությունը և դրա վրա կարգավորիչ ազդեցության գործոնների գնահատման մեթոդաբանության մշակումը:

Հետազոտության նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ՀՀ աշխատանքի շուկայի հետազոտության համատեքստում ներկայացնել բնակչության զբաղվածության կարգավորման տեսամեթոդաբանական հիմքերը և գործառույթները,
- Աշխատաշուկայի և զբաղվածության կարգավորման մեթոդների և մոդելների կիրառման միջազգային փորձի վերլուծության հիման վրա բացահայտել դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում,
- վերլուծել զբաղվածության մակարդակի և դրա վրա ազդող մի շարք գործոնների փոխկապվածությունը և այդ համատեքստում լուծել վիճակագրական տվյալների համադրելիության խնդիրը:
- վերլուծել զբաղվածության և տնտեսության կարևորագույն ցուցանիշների փոխկապվածությունը մակրոմակարդակում և տնտեսության առանցքային ոլորտներում,
- մշակել զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման մոտեցումները,
- շահառուների սպասումների տեսանկյունից առաջարկել զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման մեթոդաբանություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է, մասնավորապես, ՀՀ աշխատանքի շուկան: Հետազոտության առարկան՝ զբաղվածության կարգավորման համակարգն է և դրա վրա ազդեցություն ունեցող գործոնների արդյունավետության բարձրացմանը միտված կառուցակարգերը:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը կայանում են հետևյալում՝

- ՀՀ աշխատաշուկայի կառուցվածքային տեղաշարժերի գործոնային փոխառնչությունների հիման վրա առաջարկվել է անհրաժեշտ վստահության աստիճանով ռեգրեսիոն մոդել՝ ստոխաստիկ փոխկախվածությամբ ներկայացնելով ՀՆԱ-ի փոփոխությունների վրա գյուղատնտեսության և առևտրի ոլորտում զբաղվածության կարգավորման ներազդեցությունը, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ-ում զբաղվածության մակարդակի և

մակրոտնտեսական ցուցանիշների կապի սերտության փոխառնչությունները, որոնք թույլ են տալիս կանխատեսելու զբաղվածության մակարդակի փոփոխությունները կախված դրամական տրանսֆերտներից, միջին աշխատավարձից, ներմուծման և արտահանման իրական ծավալներից:

▪ Մշակվել է զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման մեթոդաբանություն, որը հնարավորություն է ընձեռնում զբաղվածության կարգավորման առանձին ոլորտների և գործիքների կիրառման ներազդեցության շնորհիվ ներկայացնելու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական լարվածության թուլացման ուղղությունները:

▪ Շահառուների սպասումների հիման վրա առաջարկվել է զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման հայեցակարգ, որը հնարավորություն է ընձեռնում համադրելի դարձնելու պետություն-մասնավոր ոլորտ փոխահամագործակցված կարգավորիչ գործառույթների արդյունքները և դրանով իսկ վերհանելու զբաղվածության կարգավորման ուժեղ և թույլ կողմերը:

<u>Հետազոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:</u>

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկություններն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Զբաղվածության կարգավորման արդյունավետության վրա ազդող գործոնների շրջանակի հետազոտումը կարևոր նշանակություն ունի ընդհանուր առմամբ մակրոտնտեսական քաղաքականության իրականացման, ինչպես նաև, աշխատանքի շուկայում կայունության պահպանման տեսանկյունից:

Հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտակար լինել մակրոտնտեսական քաղաքականության հիմնահարցերով զբաղվող մասնագետների, ինչպես նաև քաղաքականությունն իրականացնող պետական կառավարման մարմինների համար:

<u>Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:</u>

Հետազոտության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի Եվրոպական համալսարանում, պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների գիտական նստաշրջաններում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները հրապարակվել են հեղինակի կողմից հրատարակված 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցածքը և ծավալը:

Ատենախոսությունը շարադրված է 138 էջի վրա՝ առանց հավելվածների, և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Բնակչության զբաղվածության և աշխատանքի շուկայի տեսամեթոդաբանական մեկնաբանումները**» գլխում քննարկվում են աշխատաշուկայի կարգավորման հիմնախնդիրները և այդ ուղղությամբ միջազգային առաջավոր փորձի լուծումները:

Անկախացումից ի վեր, ՀՀ-ում գործազրկության մակարդակը կայուն աճի միտում է ունեցել, ինչը պայմանավորված էր ԽՍՀՄ-ի փլուզմամբ պայմանավորված՝ տնտեսությունում լուրջ կառուցվածքային փոփոխություններով: Հետխորհրդային Հայաստանում գործազրկության ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2007 թ., կազմելով 9,8%, իսկ 2008 թ. այն կտրուկ աճել է մինչև 16,3%, պայմանավորված հատկապես միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամով: Հետագա ժամանակաշրջանում գործազրկության ցուցանիշը փոփոխական էր, 2013թ. հետո դրսևորելով աճի միտում (2020 թ. 16,6%)[1]:

ՀՀ համար առավել կարևոր է աշխատողների սոցիալական և իրավական պաշտպանվածության բարձր մակարդակը, աշխատաշուկայի արդյունավետ ակտիվ քաղաքականությունը: Ասիական մոդելի բնորոշ գծերից է կադրերի վերապատրաստումը կազմակերպության պահանջներին համապատասխան, ինչն էլ կանխում է որակյալ անձնակազմի արտահոսքը կազմակերպությունից դուրս, նպաստում աշխատողների բարոյահոգեբանական մոտիվացմանը: Որպես բրիտանական մոդելի կարևոր հատկանիշ, կարելի է առանձնացնել սոցիալական ապահովության բարձր մակարդակը, իսկ ամերիկյան մոդելից կարելի է առանձնացնել աշխատատեղերի ստեղծման արագությունը, մասնագիտական առաջխաղացման հնարավորությունները և աշխատանքային խիստ պայմանները, ինչը նպաստում է աշխատողների պատասխանատու մոտեցմանն իրենց աշխատանքին, անհատի ինքնազարգացման և ինքնադրսևորման հնարավորությունների գործադրմանը աշխատաշուկայում՝ նամանավանդ տնտեսության թվային փոխակերպման պայմաններում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ զբաղվածության ոչ բավարար մակարդակի հիմնական պատճառներն են ուսումնական հաստատությունների շրջանավարտների որակավորման և կրթության մակարդակի

[1] Համաշխարհային բանկ (World Bank), https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM:

ու կոմպետենցիաների անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջարկին, ցածր որակի կրթական գործընթացի իրականացումը մասնագիտական տարբեր մակարդակի հաստատություններում, շրջանավարտների զբաղվածության հստակ ռազմավարության բացակայությունը: Վերջինս զգացվում է հատկապես միջնաերկարաժամկետ սոցիալ-տնտեսական ծրագրերում մասնագետ կադրերի պատրաստման և պատվիրակման առումներով:

ՀՀ-ում զբաղվածության ոլորտում պետության վարած տնտեսական քաղաքականությունը մինչև 2000 թ. պասիվ բնույթ էր կրում և չէր ապահովում էական դրական տեղաշարժեր աշխատանքի շուկայում: Բավական է նշել միայն այն, որ պետությունը, զբաղվածության ծառայությունների միջոցով գրանցում և հաշվառում էր գործազուրկներին, վճարում նպաստ, գրանցում ազատ աշխատատեղերը և առաջարկում չզբաղված անձանց: Եթե 1995 թ. աշխատաշուկայի քաղաքականության ամբողջ ծախսերն ուղղվել են պասիվ քաղաքականությանը, ապա 20 տարի անց՝ 2015 թ.՝ աշխատանքի շուկայի քաղաքականության գրեթե ողջ ֆինանսավորումն ուղղվել է ակտիվ ծրագրերի իրականացմանը: Դրան է նպաստել 2014 թ. «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը, որով դադարեցվել է գործազրկության նպաստների տրամադրումը, և անցում է կատարվել զբաղվածության նոր մոդելին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Զբաղվածության պետական կարգավորման հայեցակարգային հիմնախնդիրները»** գլխում իրականացվել են վիճակագրական գործոնային վերլուծություններ:

Զբաղվածության վրա COVID-19-ի ազդեցությունը ուսումնասիրելու նպատակով որպես բազային տվյալներ են համարվել զբաղվածության մակարդակի դինամիկայի եռամսյակային շարքերը: Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության վրա COVID-19-ը և պատերազմը հանրագումարային ազդել են միջինը 7-8%-ով նվազմամբ: Ազդեցության դինամիկան ներկայացված է գծապատկեր 1-ով:



Գծապատկեր 1. ՀՀ զբաղվածության վրա COVID-19-ի և պատերազմի ազդեցության դինամիկան[2]

Այդուհանդերձ, ճգնաժամի ավարտից հետո Հայաստանի տնտեսությունը մտնելու է զարգացման մի նոր, հետճգնաժամային ժամանակաշրջան, որն անհնար է պատկերացնել առանց կայուն աշխատանքի շուկայի: Վերջինս թույլ կտա մեր երկրին լիակատար ինտեգրվել միջազգային տնտեսական հարաբերություններին, որտեղ որոշիչ նախապայման է երկրի մրցունակությունը, բարձր որակավորված և շարժունակ աշխատուժը, կայուն զբաղվածությունը և նմանատիպ այլ գործոններ:

Վիճակագրական տվյալների բազան՝ ներկայացվել է Էկոնոմետրիկ մոդել Կոբբ-Դուգլասի հայտնի հատուկացմամբ.

$$GDP_t = A \cdot K_t^{\alpha_1} \cdot L_t^{ag\alpha_2} \cdot L_t^{s\alpha_3} \cdot L_t^{ind\alpha_4} \cdot L_t^{cons\alpha_5} \cdot \varepsilon_t, \quad (1)$$

որտեղ

GDP_t — համախառն ներքին արդյունքն է շուկայական գներով t —րդ տարում,

K_t — հիմնական միջոցների համախառն կուտակումն է շուկայական գներով t —րդ տարում,

L_t^{ag} — զբաղվածների միջին տարեկան թվաքանակն է գյուղատնտեսությունում t —րդ տարում,

L_t^{s} — զբաղվածների միջին տարեկան թվաքանակն է առևտրի և այլ ծառայությունների ոլորտում t —րդ տարում,

[2] ՀՀ վիճակագրական կոմիտե https://www.armstat.am/file/article/sv_02_20a_141.pdf. էջ 49:
ՀՀ վիճակագրական կոմիտե https://www.armstat.am/file/article/sv_02_22a_141.pdf. էջ 49:

L_t^{ind} — զբաղվածների միջին տարեկան թվաքանակն է արդյունաբերությունում t —րդ տարում,

L_t^{cons} — զբաղվածների միջին տարեկան թվաքանակն է շինարարությունում t —րդ տարում,

A — և $\alpha_1, \cdots, \alpha_5$ —մոդելի անհայտ պարամետրերն են,

ε_t — մոդելի անհայտ պարամետրն է t —րդ դիտման դեպքում,

t — տարվա ինդեքսն է: Ընդ որում՝ $t = \overline{2002; 2020}$:

Կորելյացիոն վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Կորելյացիոն վերլուծության արդյունքները[3]

Ցուցանիշ	LGDP	LK	LLAG	LLCONS	LLIND	LLS
LGDP	1					
LK	0,76	1				
LLAG	-0,71	-0,19	1			
LLCONS	0,43	0,46	-0,02	1		
LLIND	-0,70	-0,71	0,39	-0,45	1	
LLS	0,70	0,42	-0,49	0,69	-0,32	1

Ինչպես ցույց են տալիս կորելյացիայի բերված գործակիցները, անկախ փոփոխականներից բոլորը՝ բացառությամբ շինարարությունում աշխատողների թվաքանակի լոգարիթմված ցուցանիշից, ունեն ուժեղ կախվածություն ՀՆԱ-ի լոգարիթմված ցուցանիշի հետ: Սակայն, մյուս կողմից կապեր են առկա անկախ փոփոխականների միջև: Մասնավորապես, արդյունաբերությունում աշխատողների թվաքանակի և հիմնական միջոցների կուտակման լոգարիթմված ցուցանիշների միջև առկա է ուժեղ կապ, որը կարող է խնդիրներ առաջացնել մոդելում: Բացի այդ՝ նկատենք, որ հիմնական միջոցների կուտակման ցուցանիշի և ՀՆԱ-ի կախվածությունն ավելի ուժեղ է, քան արդյունաբերությունում զբաղվածների թվաքանակի և ՀՆԱ-ի լոգարիթմված ցուցանիշների միջև կապը: Վերջնական հատուկացմամբ առաջարկվող մոդելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով, որի արդյունքում ստացվել է հետևյալ գնահատված մոդելը.

[3] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից տվյալների վերլուծության հիման վրա:

$$\widehat{lnGDPSA_t} = \underbrace{-56}_{(0,000)} + \underbrace{0,24}_{(0.0031)} \cdot lnKSA_t + \underbrace{0,57}_{(0.0000)} \cdot lnL_t^{agSA} + \underbrace{4,65}_{(0.0000)} \cdot lnL_t^{sSA}, R^2_{ուղղ.} =$$

$$= 0.99, DW \sim 2,$$

որտեղ

$\widehat{lnGDPSA_t}$ –ն մոդելի կախյալ փոփոխականի գնահատված արժեքն է t –րդ դիտման դեպքում:

Ատենախոսության երրորդ՝ **«Զբաղվածության կարգավորման արդյունքների գնահատման բարելավման ուղիները»** գլխում քննարկվել են զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատմանը առնչվող հիմնախնդիրների լուծումներ:

Տարբեր չափիչներով զբաղվածության կարգավորման արդյունքների գնահատումները ներկայացվել են չափայնության մեկ հարթությունում և դրանք դարձնելով համադրելի, եթե կիրառվեն հարաբերական մեծություններ: Դիցուք, առաջարկվել է զբաղվածության կարգավորման արդյունքները ներկայացնել գործակիցներով, որոնք ներառվում են կարգավորման արդյունավետությունը բնութագրող մեկ ինտեգրալային ցուցանիշում և ներկայացնում են շահառուների սպասումների իրագործման աստիճանը: Այս նպատակով առաջարկվում է իրականացնել հետևյալ քայլերը (տես գծապատկեր 2.):



Գծապատկեր 2. Զբաղվածության կարգավորման արդյունավետության ինտեգրալային ցուցանիշի հաշվարկման քայլերը[4]

[4] Կազմվել է հեղինակի կողմից:

Զբաղվածության կարգավորման արդյունավետության առաջարկվող ինտեգրալային ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$F = (\Sigma \Delta D)/n$

որտեղ՝

F – զբաղվածության կարգավորման արդյունավետության մակարդակը՝ շահառուների նպատակադրումների իրագործման տեսանկյունից,

ΔD – զբաղվածության կարգավորման շահառուների սպասումներից փաստացի ձեռքբերումների գործակցային շեղումները,

n – սպասումները չափող ցուցիչների քանակը:

Այսպիսով, շահառուների սպասումների տեսանկյունից զբաղվածության կարգավորման արդյունավետության ցուցանիշի հաշվարկը հնարավորություն է տալիս.

Առաջին, համապարփակ ներկայացնելու զբաղվածության կարգավորման շահառուների սպասումների իրագործման փաստացի աստիճանը և գնահատելու կարգավորիչ գործիքների կիրառումից ստացվող ձեռքբերումները:

Երկրորդ, իրականացնելու զբաղվածության վարքագծային գործոնային վերլուծություն, պարզելով կարգավորման յուրաքանչյուր ուղղության ազդեցությունը զբաղվածության մակարդակի փոփոխությունների վրա:

Երրորդ, ապահովելու զբաղվածության կարգավորման տարաբնույթ արդյունքների միասնական չափայնություն, որը հնարավորություն է ընձեռում համադրելի դարձնելու պետություն-մասնավոր ոլորտ փոխհամագործակցված կարգավորիչ գործառույթների արդյունքները և դրանով իսկ վերհանելու զբաղվածության կարգավորման ուժեղ և թույլ կողմերը:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները:

1. ՀՀ զբաղվածության կարգավորման միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման հիման վրա կարելի է եզրահանգել, որ ՀՀ զբաղվածության կարգավորման ոլորտում դեռևս առկա են չիրացված հնարավորություններ: ՀՀ պետք է ուղիներ որոնի զբաղվածության կարգավորման գործում: ՀՀ համար առավել կարևոր է դառնում աշխատողների սոցիալական և իրավական պաշտպանվածության բարձր մակարդակի ապահովումը, աշխատաշուկայի արդյունավետ ակտիվ քաղաքականությունը, կադրերի վերապատրաստումը, աշխատատեղերի ստեղծման արագությունը, մասնագիտական առաջխաղացման հնարավորությունները և այլն: Այն հնարավորություն կտա ձևավորելու զարգացած աշխատաշուկա և ապահովելու զբաղվածության բարձր մակարդակ:

2. ՀՀ-ում զբաղվածության կառավարման մոդելի ձևավորման համար անհրաժեշտ է բարձրացնել այս գործընթացի թափանցիկության աստիճանը: Մասնավորապես պետք է հստակ ձևակերպված լինեն բոլոր հաստիքային

կանոնակարգերը, յուրաքանչյուր հաստիքի կարիերայի աճի և պատժամիջոցների կոնկրետ չափորոշիչները: Դրանք պետք է հասանելի լինեն կոլեկտիվի բոլոր աշխատողների համար: Պետության համապատասխան մարմինները պետք է ապահովեն աշխատողների իրավունքների պաշտպանության երաշխիքները: Սա ոչ միայն առանձին կազմակերպության արդյունավետ աշխատանքի հիմքն է, այև, դառնալով համակարգ, ամբողջ երկրի տնտեսության զարգացման հիմքն է:

3. Զբաղվածության կարգավորումը կարևորագույն խնդիրներից է ինչպես երկրի, այնպես էլ առանձին կազմակերպության մակարդակով մշակել մարդկային ռեսուրսների պատրաստման, աշխատանքի տեղավորման, իրավունքի պաշտպանության, օբյեկտիվ գնահատման, առաջխաղացման, նյութական և բարոյական մոտիվացիայի խնդիրների լուծումը: Ոչ բոլոր կազմակերպություններն են պահպանում կանոնակարգերը և օրենքները նոր աշխատողներ ընդունելու ժամանակ: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ փորձ չունեցող, ավարտած մասնագետների համար պետական խիստ վերահսկողությամբ պետք է նախատեսվեն իրենց կարգավիճակին համապատասխան պայմաններ:

4. ՀՀ-ում զբաղվածության մակարդակի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխառնչության գնահատումները ցույց են տալիս, որ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած փոխանցումների ծավալների և զբաղվածության մակարդակի միջև առկա է դրական կապ: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած փոխանցումների ծավալների 1 %-ով աճը հավասար պայմաններում, հանգեցնում է զբաղվածության մակարդակի միջինում 0,13%-ով աճի: Աշխատուժի պահանջարկի 1%-ով աճը այլ հավասար պայմաններում հանգեցնում է զբաղվածության մակարդակի միջինում 0,21%-ով աճի: Ներմուծման իրական ծավալների ինդեքսի 1%-ով աճը այլ հավասար պայմաններում հանգեցնում է զբաղվածության մակարդակի միջինում 0,11%-ով նվազման: Արտահանման իրական ծավալների ինդեքսի 1%-ով աճը այլ հավասար պայմաններում, հանգեցննում է զբաղվածության մակարդակի միջինում 0.1% աճի:

ՀՀ աշխատաշուկայի կառուցվածքային փոփոխությունների գործոնային փոխառնչություններով հետազոտությունում առաջարկվել է բավարար վստահության աստիճանով ռեգրեսիոն մոդել, որից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվաքանակի 1%-ով աճը, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել տվյալ տարվա ՀՆԱ-ի աճին 0,6%-ով,
- առևտրի և ծառայությունների ոլորտում զբաղվածների թվաքանակի 1%-ով աճը, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել տվյալ տարվա ՀՆԱ-ի 4,7%-ով աճին:

5. Առաջարկվել է զբաղվածության պետական կարգավորման արդյունավետությունը գնահատող ցուցանիշ, որը հնարավորություն է տալիս գնահատելու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական լարվածության մեղմացումը զբաղվածության կարգավորման առանձին ուղղությունների և գործիքների կիրառման ներազդեցության շնորհիվ: Բացի այդ, աշխատուժի պահանջարկի բավարարման և առաջարկի հավասարակշռման համատեքստում այն արձանագրում է գործազրկության և ազգաբնակչության սոցիալ-տնտեսական սպասումների փոխառնչության շրջանակը: Այս դեպքում նաև պետական շահերի տեսանկյունից բացահայտվում են սոցիալական համերաշխության խաթարման ռիսկերը, որոնք ձևավորվում են պետության կողմից զբաղվածության անարդյունավետ կարգավորման արդյունքում:

Հետազոտության վերջնարդյունքները հնարավորություն են տալիս աջակցելու աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության պահպանմանը, սոցիալական լարվածության թուլացմանը, գործազրկության մակարդակի իջեցմանը, աշխատուժի օգտագործման լիարժեքության ապահովմանը, երկրում սոցիալական համերաշխության հաստատմանը:

Հետազոտության առանցքային դրույթները հրատարակվել են ատենախոսի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Արինե Ստեփանյան, Զբաղվածության հիմնախնդիրները ՀՀ աշխատանքի շուկայում, Ֆինանսնար և էկոնոմիկա, #3-4 (211-212), 2018, էջ 132-137:
2. Արինե Ստեփանյան, Զբաղվածության կարգավորման արտասահմանյան փորձը Արևելյան Եվրոպայում և Չինաստանում, Այլընտրանք գիտական հանդես, #3, 2018, էջ 310-320:
3. Արինե Ստեփանյան, Զբաղվածությունը որպես տնտեսական աճի կարևորագույն գործոն, Եվրոպական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 9, 2018, էջ 11-20:
4. Արինե Ստեփանյան, Զբաղվածության գնահատման մեթոդական մոտեցումները, Եվրոպական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 11(01), 2020, էջ 346-356:
5. Արինե Ստեփանյան, Մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը զբաղվածության մակարդակի վրա, Այլընտրանք գիտական հանդես, #1, 2021, էջ 46-55:
6. Արինե Ստեփանյան, Զբաղվածության մակարդակի վիճակագրական տվյալների համադրելիության խնդրի վերլուծությունը, Եվրոպական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 12(01), 2021, էջ 158-168:
7. Arine Stepanyan, Issues of Assessment Employment state Regulation Results, Finance and accounting scientific journal, #1 (9), 2022, pp. 141-151:

АРИНЕ ТАРОНОВНА СТЕПАНЯН

ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ ЗАНЯТОСТИ В РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика и управление народным хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 16-го декабря 2022 г. в 15^{00} часов, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Цель и задачи исследования

Целью исследования является комплексный анализ уровня занятости в РА и разработка факторов оценочной методологии, влияющих на его регулирование.

Для достижения цели исследования в диссертации были предложены и решены следующие задачи:

• в контексте исследования рынка труда РА представлены теоретические основы и функции регулирования занятости населения,

• на основе анализа международного опыта использования моделей регулирования рынка труда и занятости выявлены возможности их применения в РА,

• проанализирована взаимосвязь между уровнем занятости и влияющими на нее факторами, тем самым решена проблема сопоставимости статистических данных.

• проанализирована взаимосвязь между занятостью и важнейшими показателями экономики на макроуровне и в ключевых отраслях экономики,

• разработаны подходы к оценке результатов государственного регулирования занятости,

• предложена методология оценки эффективности регулирования занятости с точки зрения ожиданий бенефициаров.

Объект и предмет исследования

Объектом исследования является экономика РА, в частности, рынок труда республики. Предметом исследования является система регулирования занятости и эффективность факторов, влияющих на нее.

Основной результат исследования и научная новизна

На основе изучения вопросов занятости в качестве новизны были выдвинуты следующие положения:

1. на основе факторных взаимодействий структурных сдвигов рынка труда РА предложена регрессионная модель с необходимым уровнем достоверности, представляющая влияние регулирования занятости в сельском хозяйстве и торговле на изменения ВВП со стохастической взаимозависимостью,

2. на основе корреляционного анализа между уровнем занятости и макроэкономическими показателями в РА осуществлен прогноз изменения уровня занятости в зависимости от денежных переводов, средней заработной платы, реальных объемов импорта и экспорта,

3. разработана методика оценки результатов государственного регулирования занятости, которая дает возможность для ослабления социально-экономической нагрузки населения страны за счет влияния отдельных направлений регулирования занятости и использования регулятивных инструментов,

4. на основе ожиданий бенефициаров предложена концепция оценки эффективности регулирования занятости, которая дает возможность сравнения результатов взаимного сотрудничества регулирующих функций государственного и частного секторов и тем самым выделения сильных и слабых сторон урегулирования занятости.

ARINE TARON STEPANYAN

EMPLOYMENTIBILITY REGULATION ISSUES IN RA

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PHD of economic sciences in the field 08.00.02 – "Economy, the economics of its spheres and control''.

The defense of the dissertation will take place on 16-th December, 2022, at 15^{00} o'clock, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 52 Abovyan str., Yerevan, 0009.

ABSTRACT

Purpose and objectives of the study

The purpose of the research is a comprehensive analysis of the level of employment in the RA and the development of a methodology for assessing the factors of regulatory impact on it.

According to the purpose of the research, the following objectives were proposed in the dissertation:

• in the context of the study of the labor market of the Republic of Armenia, to present the theoretical foundations and functions of regulating the employment of the population;

• based on the analysis of international experience in the use of labor market and employment regulation models, identify the possibilities of their application in the Republic of Armenia;

• analyze the relationship between the level of employment and the factors influencing it, thereby solving the problem of comparability of statistical data.

• analyze the relationship between employment and the most important indicators of the economy at the macro level and in key sectors of the economy;

• develop approaches to assessing the results of state regulation of employment;

• propose a methodology for evaluating the effectiveness of employment regulation in terms of beneficiary expectations.

Object and subject of research

The object of the study is the economy of the Republic of Armenia, in particular the labor market of the republic. The subject of the study is the system of employment regulation and the effectiveness of the factors influencing it.

The main result of the study and scientific novelty

Based on the study of employment issues, the following provisions were put forward as a scientific novelty:

1. based on factor interactions of structural shifts in the labor market of the Republic of Armenia, a regression model with the required level of reliability is proposed, which represents the impact of employment regulation in agriculture and trade on changes in GDP with stochastic interdependence,

2. Based on correlation analysis between the level of employment and macroeconomic indicators in the Republic of Armenia, the forecast of changes has been carried out changes in the level of employment depending on remittances, average wages, real volumes of imports and exports,

3. a methodology for assessing the results of state regulation of employment has been developed, which makes it possible to reduce the socio-economic burden of the country's population through the influence of certain areas of employment regulation and the use of regulatory instruments,

3. based on the expectations of the beneficiaries, the concept of assessing the effectiveness of employmentibility regulation was proposed, which makes it possible to compare the results of mutual cooperation between the regulatory functions of the public and private sectors and thereby highlight the strengths and weaknesses of employmentibility governing.